ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝

Իրավունքի և
քաղաքականության
Ինստիտուտի տնօրեն
Մ.Ա. Քալաշյան

"12" հոկտեմբերի 2022 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի և քաղաքականության
Ամբիոն՝ Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի

*Հեղինակ՝ Մարգսյան Ա. Ա.*

*ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ*

Դասընթաց՝ Փաստաբանի կողմից քրեագիտական մեթոդների և միջոցների օգտագործումը

**Մագիստրոսական ծրագիր՝ 042802.03.7 Կրիմինալիստիկա**

**Դասիչ մասնագիտություն՝ 042802.00.7 Իրավական ուսումնասիրություններ**

ԵՐԵՎԱՆ

**1. Ներածություն**

XXI դարում փաստաբանական գործունեության կարևորության ու նշանակության բարձրացումը պայմանավորված է, նախ և առաջ, մրցակցության սկզբունքն ինչպես ներպետական դատարանների, այնպես էլ եվրոպական դատարանի կողմից անվերապահորեն պահպանելով:

«Փաստաբանի կողմից քրեագիտական մեթոդների և միջոցների օգտագործումը» դասընթացը ապահովում է փաստաբանական գործունեության ընթացքում քրեագիտական մեթոդների և միջոցների կիրառման առանձնահատկությունների բազմակողմանի ուսումնասիրություն ու հետազոտում: Ընդ որում՝ հիշյալ դասընթացի դասավանդման շրջանակներում ուսումնասիրությունները վերաբերելու են ինչպես <u>փաստաբան-պաշտպանի</u>, այնպես էլ փաստաբան-տուժողի ներկայացուցչի կողմից օգտագործվող քրեագիտական մեթոդներին և միջոցներին:

Այսինքն՝ հիշյալ դասընթացը մի կողմից իր մեջ ներառում է հանցագործությունների բացահայտման և սոցիալական արդարության վերականգնման քրեագիտական մեթոդների ու միջոցների հետազոտումը, իսկ մյուս կողմից՝ օրենքով չարգելված միջոցներով ենթադրյալ հանցանք կատարած անձին արդարացնող կամ նրա պատասխանատվությունը, պատիժը մեղմացնող ապացույցների և փաստական տվյալների ձեռքբերման ուղղությամբ կիրառվող քրեագիտական մեթոդների ու միջոցների հետազոտումը:

**2. Դասընթացի նպատակը և խնդիրը**

Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնարար մակարդակով ծանոթացնել փաստաբանական գործունեության առանձնահատկություններին, այդ թվում՝ պաշտպանական և մեղադրական (տուժող կողմը ներկայացնելու դեպքում) գործունեության ընթացքում կիրառվող քրեագիտական հնարքներին:

Կրթական դասընթացի հիմնական խնդիրն է ուսանողներին ծանոթացնել փաստաբանական գործունեության առանձնահատկություններին՝ քրեագիտական միջոցների կիրառման տեսանկյունից:

**2.1. Կրթական վերջնարդյունքները**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողները **պետք է՝**

**իմանան՝**

- պաշտպանական կողմի և տուժող կողմի իրավունքների մասին;
- փաստաբանների կողմից դրանք առավելագույնս արդյունավետ պաշտպանելու քրեագիտական հիմնական մեթոդները;
- մեղադրյալի (կասկածյալի) և տուժողի իրավունքների պաշտպանության մասով մինչդատական և դատական վարույթների շրջանակներում փաստաբանական գործունեության առանձնահատկությունները, նաև կիրառվող փաստաբանական գործունեության քրեագիտական մեթոդների և միջոցների առանձնահատկությունները:

**կարողանան՝**

- արդյունավետ կիրառել պաշտպանական կողմի և տուժող կողմի իրավունքների պաշտպանության քրեագիտական հիմնական մեթոդները;
- իրագործել մեղադրյալի (կասկածյալի) ու տուժողի իրավունքների պաշտպանության ներպետական միջոցներիը:

**ունակ լինեն՝**

- քրեական նույնականացման տեսության օգտագործման միջոցով բացահայտել քննիչի թույլ տված թերությունները կոնկրետ քրեական գործերով;
- կիրառել ՀՀ օրենսդրության վրա հիմնված ռազմավարական և տակտիկական սկզբունքներ, ինչպես նաև ապացույցների հետազոտման հատուկ մեթոդներ;
- կիրառել մասնագիտական պաշտպանության հիմնական տակտիկական միջոցները՝ քննչական գործողությունների իրականացման ժամանակ:

**2.2. Դասընթացի աշխատատրության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)**

| Ուսումնական աշխատանքների տեսակները | Ամբողջը, ակ. ժամ. | Բաշխում ըստ կիսամյակների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 Կիս. | 2 Կիս. | 3 Կիս. | 4 կիս. | 5 Կիս. | 6 Կիս. |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| **1.Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը** | **108** | **108** | | | | | |
| 1.1. Լսարանային պարապմունքներ: | **36** | **36** | | | | | |
| 1.1.1.Դասախոսություններ | **18** | **18** | | | | | |
| 1.1.2.Սեմինարներ | **18** | **18** | | | | | |
| 1.2. Ինքնուրույն աշխատանք | **72** | **72** | | | | | |
| Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք) | **ստուգարք** | **ստուգարք** | | | | | |

2.3.Դասընթացի թեմատիկ պլան

| Դասընթացի բաժինները և թեմաները | Ընդհանուր (ակ. ժամ) | Դասախոսություններ (ակ. ժամ) | Սեմինար (ակ. ժամ) | Պարապմ-ունքների այլ տեսակներ (ակ. ժամ) |
|---|---|---|---|---|
| **Բաժին 1. Փաստաբանական գործունեության իրավական և տեսական հիմունքները** | **40** | **6** | **6** | **28** |
| Թեմա 1.1. Մինչդատական վարույթի ընթացքում փաստաբանի գործունեության առանձնահատկությունները | 20 | 3 | 3 | 14 |
| Թեմա 1.2. Դատաքննության ընթացքում փաստաբանական գործունեության էությունը | 20 | 3 | 3 | 14 |
| **Բաժին 2. Փաստաբանի քրեագիտական գործունեության էությունն ու առանձնահատկությունները** | **68** | **12** | **12** | **44** |
| Թեմա 2.1. Փաստաբանի կողմից օգտագործվող քրեագիտական մեթոդները և միջոցները | 22 | 4 | 4 | 14 |
| Թեմա 2.2. Գործնականում փաստաբանի կողմից քրեագիտական մեթոդների և միջոցների օգտագործման խնդիրները | 22 | 4 | 4 | 14 |
| Թեմա 2.3. Փաստաբանական գործունեության տեսակները՝ «պաշտպանական քրեագիտություն» և «մեղադրական քրեագիտություն», և մրցակցային դատաքննության էությունը | 24 | 4 | 4 | 16 |
| **Ընդամենը** | **108** | **18** | **18** | **72** |

**4. Գրականության ցանկ**

**Պարտադիր գրականություն**


1. ՀՀ օրենքը «Զենքի մասին», ընդունված է Ազգային Ժողովի կողմից 3 հուլիսի 1998 թ.
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է Ազգային Ժողովի կողմից 1 հուլիսի 1998 թ.
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է Ազգային Ժողովի կողմից 30.06.2021 *թ.*
4. Ալեքսանյան Մ. Փորձաքննությունը քրեական դատավարությունում /Փորձաքննություն նշանակելը և կատարելը, հետազոտման համար նմուշներ ստանալը/. Երևան: Միվա-Պրեսս, 2009.1000 էջ:
5. Հրայր Ղուկասյան, Անահիտ Հարությունյան Ոչ իրավաչափ վարքագծի արգելքը փաստաբանական էթիկայի լույսի ներքո | Պետություն և իրավունք, N 2 (64), Երևան, 2014, էջեր 26-34.
6. Արսեն Մարտիրոսյան Վկայի փաստաբանի կարգավիճակը ՀՀ քրեական դատավարությունում | «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», 2015 № 3 (18), էջ 50-59
7. Վահե Ենգիբարյան Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա: Կրիմինալիստիկական տակտիկա | Գիտագործնական ձեռնարկ Երևան, Թասկ ՍՊԸ, 2018, 732 էջ
8. Վ. Գ. Ենգիբարյան Հանցագործությունների քննության մեթոդիկա: Կրիմինալիստիկական մեթոդիկա: | Դասագիրք բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների համար՝ երաշխավորված ՀՀ ԿԳՆ կողմից, Երևան, Թասկ, 2017, 608 էջ
9. Ենգիբարյան Վ. Գ. Հանցագործությունների քննության կազմակերպման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմքերը | Մենագրություն, Երևան, Անտարես, 2016, 256 էջ
10. Արթուր Չախոյան Մասնագետի հատուկ գիտելիքների և դրանց կիրառման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմնախնդիրները | ԵՊՀ հրատ., Երևան, 200 էջ:

11. Վ. Գ. Ենգիբարյան Առանձին տեսակի հանցագործությունների քննության մեթոդկիա (Կրիմինալիստիկական մեթոդիկա) | Զեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009, 416 էջ

**Լրացուցիչ գրականություն**

1. «Ժամանակակից գիտական տեխնոլոգիաների և մեթոդների կիրառումը փորձաքննության ոլորտում» Միջազգային գիտաժողովի նյութեր, ԵրևանԾաղկաձոր, 16-17 հունիսի 2015թ./ ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրո, խմբ. Խորհուրդ՝ Ա.Ջավադյան և ուրիշ.- Երևան-Ծաղկաձոր, 2015, 245 էջ:
2. «Դատափորձագիտական գործունեության արդի հարցերը, դատական փորձագիտության եվ քրեագիտության ժամանակակից խնդիրները, զարգացման միտումներն ու հեռանկարները» միջազգային գիտագործնական գիտաժողովի նյութերի (թեզիսների) ժողովածու նվիրված հայաստանի հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի«փորձաքննությունների ազգային բյուրո» պոակ-ի հիմնադրման 15-ամյակին 2019թ. սեպտեմբերի 25-27, Երևան
3. Белканов Е.А. Стратегии адвокатской деятельности и деформации профессионального правосознания. - Екатеринбург, 2014.
4. Баев О.Я. Криминалистическая адвокатология как подсистема науки криминалистики. - М., 2012.
5. Макаркин А.И. Новый УПК и защита по уголовным делам // Эволюция права и закона как фактор изменения криминалистики. 2013. №4.
6. Филиппов А.Г. Профессиональная деятельность адвоката как объект криминалистического исследования. - Екатеринбург, 2012.
7. Комаров И.М. Криминалистические операции в досудебном производстве. - Барнаул, 2013.
8. Белкин Р.С. Криминалистика: проблемы сегодняшнего дня. - М., 2013.
9. Ищенко Е.П., Зотчев В.А. Криминалистическая фотография и видеозапись. - М.: Юристь, 2013.
10. Леви А.А., Горинов Ю.А. Звукозапись и видеозапись в уголовном судопроизводстве. – М., 2012.
11. ՀՀ դատարանների պրակտիկան և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները՝ www.datalex.am և www.arlis.am:

**5. Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները:**

**Խմբային քննարկում.** Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված իրավական հարցերի և խնդիրների վերաբերյալ: Գնահատման չափանիշները՝ Տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր և տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, բարեկիրթ վերաբերմունք խմբի անդամների հետ:

**Թեստավորում.** Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները:

**Վերջնական քննություն.** Նպատակը՝ ստուգել և գնահատել ուսանողների գիտելիքները: